

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա <<Ինչու>> հարցերը որպես սովորողների քննադատական
մտածողության հմտությունների զարգացման միջոց

Կատարող Ռոզա Խաչատուրյան

Գյումրու Ակադեմիական վարժարան

Պատմության ուսուցչուհի

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

1.Ներածություն-----	3
Գլուխ առաջին: Աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը:-----	4-9
Գլուխ երկրորդ: Աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը գործնական համատեքստում:--	10-13
4.Եզրակացություն-----	14
5.Օգտագործված գրականության ցանկ-----	15

Ներածություն

Հետազոտության ընթացքում կփորձենք ներկայացնել առաջադեմ կրթական համակարգեր ունեցող տարբեր երկրների գիտամանկավարժական փորձը ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ռուսաստան և այլն): Ըստ այդմ կվերլուծվեն և կներկայացվեն մի շարք հոդվածներ ու աշխատություններ, կբացահայտվեն առկա մոտեցումներն ու միտումները:

Նախևառաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե հնարավո՞ր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Ըստ այդմ դիտարկվել են Սուխոմլինսկու, Դայանա Հալփերնի, Արթուր Չափմանի (Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի պատմության մասնագետ, ում հետ համագործակցել էմ Արարատյան բակալավրիատի Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակներում), Լերների(2) և այլոց մոտեցումները:

Սույն հետազոտության **նպատակն** է առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման, համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում: Առաջադրված **վարկածն** է՝ բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնասիրությունը կարող է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը:

Արդիականությունը: Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետերն ու կարծիքները: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության (այսուհետև՝ ՔՄ) որոշակի փոխանցելի հմտություններ:

Գլուխ առաջին: Աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը:

Մանկավարժական գործունեության ընթացքում իմ ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Տարվա ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և

- կանխորոշում են ուսումնառության նպատակները,
- հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման
- նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,
- նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,
- ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ակտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը:

Սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել Սուխոմլինսկին [3]:

Գիտելիքի և մտածողության միջև եղած կապը փորձում է բացահայտել Դայանա Հալպերնը: Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս: Քննադատական բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և դրական, և բացասական վերաբերմունք: ՔՄ-ն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը:

Նախևառաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Իսկ կան արդյոք ապացույցներ այն մասին, որ մտածողությունը կարելի է բարելավել: Անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել ՔՄ-ը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում և գիտական տարբեր ոլորտներում: Դժվար է գտնել ՔՄ այնպիսի ոլորտ, որին հնարավոր չլինի տիրապետել [4]:

Ամերիկյան քոլեջների սովորողները վկայում են, որ իրենց քննադատական մտածողության հմտությունները զգալիորեն բարելավվել են մտածողության հմտություններ սովորեցնող դասընթացներից հետո [5]: Նրանք սկսել էին ավելի բարձր գնահատել իրենց մի շարք չափանիշներով, ինչպիսիք են՝ առանց ավելորդ շտապողականության դատողություններ անել, կարողանալ գնահատել հակադիր փաստարկները, բազմակողմանիորեն գնահատել, հաշվի առնել անորոշության գործոնը: Նրանք նշել են նաև, որ խնդիրներ լուծելիս կիրառում են տարբեր էվրիստիկ

մոտեցումներ, ինչպիսիք են ավելորդ փաստերի բացառումը, ինֆորմացիայի աղբյուրի հուսալիության գնահատումը: Հետազոտողները եկել են այն եզրակացության, որ գիտելիքները, որոնց ստացման ժամանակ տրվում են մտածողության ընդհանուր կանոններ, կարող են փոխադրվել նաև գործունեության այլ ոլորտներ:

Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Մակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինի ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ:

Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման [2]:

Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորվում ենք **պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները**: Վերջիններս համարվում են «պատմական մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ [9]: Որպես ներգործության միջոց նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ **Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում....**: Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Նշեմ նաև, որ այս հարցադրումներին պատասխանելիս աշակերտների իրականացրած ճանաչողական գործունեությունը համապատասխանում է Բլումի [7] մշակած աստիճանային համակարգի վերին աստճաններին և ենթադրում է գնահատում, աստիճանակարգում, արժևորում: Ինչպես նաև Սանդերսի **հիշողություն-**

փոխակերպում-մեկնաբանում-կիրառություն-վերլուծություն- համադրում- գնահատում համակարգում այս հարցերը դիտվում են իբրև հարցադրումների ամենաբարձր մակարդակ [8] :

Ընդհանուր հարցը	Մտածողության հմտությունները
<p>Բերեք օրինակ....</p> <p>Ի՞նչ կլինի եթե...</p> <p>Որո՞նք են ուժեղ և թույլ կողմերը...</p> <p>Ինչպե՞ս է այն ներգործում...</p> <p>Ինչով է այն կապված մեր նախկին գիտելիքի հետ...</p> <p>Բացատրեք ինչու՞</p> <p>Ինչո՞վ է կարևոր....</p> <p>Ինչո՞վ են նման, տարբեր....</p> <p>Ի՞նչ հակափաստարկ կարելի է բերել...</p> <p>Ո՞րն է պատճառը և ինչու՞</p> <p>Ինչպիսի՞ն կարող են լինել առաջադրանքի հնարավոր լուծումները...</p> <p>Համամիտ եք արդյոք պնդման հետ...</p> <p>Ինչո՞վ կհիմնավորեք ձեր պատասխանը...</p>	<p>Հավելված</p> <p>Հիպոթեզի առաջադրում</p> <p>Վերլուծություն-եզրակացություն</p> <p>Պատճառահետևանքային կապերի վերլուծություն</p> <p>Նախկին գիտելիքի ակտիվացում</p> <p>Վերլուծություն</p> <p>Արժեքի վերլուծություն</p> <p>Համեմատություն-հակադրություն</p> <p>Հակափաստարկում</p> <p>Պատճառահետևանքային կապերի վերլուծություն</p> <p>Գաղափարների սինթեզ</p> <p>Հիմնավորված գնահատական</p> <p>Գնահատում հիմնավորումով:</p>

Մտածողությունը, որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Տրամաբանության մեջ հարցը ձևակերպվում է որպես որոշ ինֆորմացիայի հարցում: Այլ կերպ հարցը մեկնաբանվում է որպես խթանող նախադասություն: Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ դու աշխատում

ես, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը:

Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ: Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաեականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից: Հարցը յուրատեսակ մանրադիտակ է, գիտելիքների որոշակի համակարգ, որն իր մի մասով (հարցով) բնորոշում է այն ինչ արդեն իսկ գիտենք և ընկած է մեր գիտելիքի հիմքում, իսկ երկրորդ մասով (պատասխան) կա որոշ չիմացություն, այսինքն այն, ինչ մենք ուզում ենք իմանալ :

Ճանաչողության գործընթացում կարևոր է ֆիքսել այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել, բայց պետք նաև ֆիքսել այն, ինչը մենք դեռևս չգիտենք և ենթակա է պարզվելու: Այդպիսիք են հենց հարցերը: Հարցի կառուցվածքը հասկանալու համար նախ պետք է առանձնացնել այն, ինչ մենք արդեն գիտենք: Մեր իմացածի հիման վրա էլ արդեն կարելի է ձևակերպել հարցը: Հարցը՝ որպես ճանաչողության ձև, միջոց է պարզելու անհայտը՝ հենվելով ինչ որ հայտնի փաստի վրա:

Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա աշակերտին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը: Հարցադրումը ազատ, չնորմավորված, հանկարծաստեղծումն է, երբ զրուցակիցները քննարկում են իրենց հուզող խնդիրը՝ ակնկալելով ինչ որ նոր տեսակետ լսել:

Ճիշտ ձևակերպված հարցը դրդում է աշակերտին փաստերի վերլուծության, գուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման: Պետք է աշակերտին դրդել մտածելու, տարբերակների որոնման: Հարցադրումից հետո պետք է սպասել մինչև աշակերտը գտնի հարցի պատասխանը և արտահայտվի: Հարցադրումը կարող է շատ արագ բարձրացնել աշխատանքի որակը: /

Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել աշակերտների մտածողության զարգացմանը: Պիտի ստեղծվի համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտել, գտնել օրինաչափությունները, սահմանել պատմական երևույթների ու գործընթացների բնույթն ու նշանակությունը, պատրաստ է լսել ու ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ: Այս դեպքում աշակերտի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ, ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ: Գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր իսկ գործունեությունը: Այս ամենի արդյունքում ձևավորվում են ավելի բարդ ճանաչողական հմտություններ:

**Գլուխ երկրորդ: Աշակերտների ստեղծագործական ու քննադատական
մտածողության հմտությունների զարգացումը գործնական
համատեքստում:**

Փորձարկման համար թիրախային խումբը ընտրելուց, իրավիճակը հստակեցնելուց հետո պետք է մշակել գործողությունների համապատասխան ծրագիր՝ ցանկալի արդյունք ապահովելու համար:

1.Պատճառահետևանքային կապերի բացահայտման համար պետք է դասի բոլոր փուլերում տալ հարցեր, որոնք սկսվում են <<Ինչու՞>> բառով, կամ հարցնել <<Ինչի՞ է դա հանգեցրել>> և աշակերտներից ակնկալել ամբողջական պատասխան:

2.Տրամադրել մանկավարժական օգնություն հատուկ հարցերի տեսքով, որոնք օգնում են աշակերտին ինքնուրույն գտնել պատճառահետևանքային կապերը նոր փաստերը հին ինֆորմացիայի հետ կապելով:

3.Աշակերտին ցույց տալ պատճառահետևանքային կապերի բազմազանությունը: Դա նշանակում է, որ չի կարելի սահմանափակվել միայն մեկ պատճառի կամ մեկ հետևանքի մատնանշումով: Ուսուցիչը ուղղակիորեն կարող է կողմնորոշել աշակերտին անհրաժեշտ քանակով պատճառներ, հետևանքներ գտնելու:

4.Թեմայի նկատմամբ հետաքրքրության առաջացում:

5.Պատճառահետևանքային տրամաբանական շղթայի կառուցում: Աշակերտը պիտի հստակ պատկերացում ունենա շղթայի յուրաքանչյուր օղակի մասին և գտնի դրանց միջև կապը, բոլոր օղակներով ստանալով պատճառահետևանքային կապերի մեկ շղթա, տա գնահատականներ:

Փորձարկումները սկսելուց առաջ պետք է հստակեցնել նաև հավաքագրվող տվյալների բնույթը, հավաքագրման եղանակները: Առաջին հերթին կիրառելու ենք մեր դիտարկումները: Աշակերտների տված պատասխանների գնահատման համար մշակվել է համապատասխան ռուբրիկ : Առանձնացվել է պատասխանի 3 մակարդակ. լիարժեք, թերի և պատասխանի բացակայություն: Լիարժեք է համարվում փաստարկված ամբողջական պատասխանը, որում հստակ նշված են երևույթի պատճառները, դրանք դասակարգված են ըստ ժամանակի և ըստ կարևորության:

Հստակ նշված են պատմականիրադարձությունների հետևանքները՝ և անմիջական, և հեռահար: Գնահատականները հիմնավորված են, դիտարկված տարբեր տեսանկյուններից:

Պատասխանը թերի է համարվում, եթե փաստը կամ երևույթը մեկնաբանված է միակողմանիորեն, կա տեսակետ, որը, սակայն, հիմնավորված ու փաստարկված չէ: Յուրաքանչյուր դասից հետո կատարված դիտարկումը թույլ կտա ֆիքսել տարբերությունը: Թեև աշակերտներին կտրվեն պատասխանելու տարբեր քանակի հարցեր, սակայն համեմատության համար դիտարկվում են 3 հարցերի պատասխաններ.¹ պատճառ,¹ հետևանք,¹ գնահատական: Մեր դիտարկումները, ուսումնասիրած գրականությունը այս առումով ցույց տվեցին, որ հարցերի 3 տեսակներն էլ նույն բարդության են և ենթադրում են քննադատական մտածողության նույն հմտությունների կիրառում: Ընդ որում դիտարկվում են թեմային առնչվող հիմնական հարցադրումները:

Դասապրոցեսի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում ունենալու համար կիրավիրվեն գործընկերներ՝ դասալսումներ իրականացնելու համար: Նրանց հետ ևս կհստակեցվեն դասալսման նպատակները՝ ուշադրության կենտրոնում պահելով աշակերտների պատասխանների ոչ միայն քանակական, այլև որակական ցուցանիշները: Փորձարկման ենթական դասերի մի մասին աշակերտներին պիտի առաջարկվի գրավոր պատասխանել հարցերին: Այս դեպքում դիտարկվելու են աշակերտների գրավոր պատասխանները: Համապատասխան սանդղակի միջոցով պիտի ներկայացվեն պատասխանների քանակական և որակական փոփոխությունները:

Աշակերտներից հավաքագրվելու են նաև գործընթացային տվյալներ ելքի տոմսերի տեսքով, ըստ այդմ դիտարկվելու են նաև աշակերտների կարծիքները կազմակերպված դասերի վերաբերյալ: Մինչ տվյալների վերլուծությանն անդրադառնալը, նշենք, որ որքան էլ փորձնական դասերից (թվով 8 դաս) ստացված փաստերի հիման վրա կառուցված մանկավարժական եզրահանգումներն ու մոտեցումները համոզիչ թվան, այնուամենայնիվ, հարկ է շեշտել, որ կախված տարբեր հանգամանքներից, թեմայի և միջավայրի առանձնահատկություններից, դրանք կարող են փոփոխվել և արդյունավետության տարբեր ցուցանիշներ ունենալ:

Փորձարկմանը նախապատրաստվելիս, երբ հստակ ձևակերպել էինք խնդիրը, որոշել միջամտության ձևերն ու եղանակները, մեզ համար պարզ էր, որ պետք չէ մեծ փոփոխություններ ակնկալել, իսկ առկա փաստերը թույլ կտան որոշակի տեղաշարժ արձանագրել:

Փորձնական յուրաքանչյուր դասին պետք է անդրադառնալ առկա տեղաշարժերին: Գրավոր պատասխաններից հետո տրվելու է համապատասխան հետադարձ կապ, հաջորդ դասին ծավալվել է բանավոր քննարկում, որից հետո դարձյալ գրավոր պատասխանել հարցերի: Համապատասխան սանդղակով ներկայացնել աշակերտների պատասխանների փոփոխվող քանակական ցուցանիշները, բայց այդ փոփոխությունները նաև ցույց են տալիս, թե ինչպես է փոխվում պատասխանների որակը. ավելի շատ մեծանում է թերի պատասխանների քանակը պատասխանի բացակայություն ցուցանիշի հաշվին, կամ թերի պատասխանների քանակը լիարժեք պատասխան բաղադրիչի հաշվին

Տվյալների վերջնական վերլուծության համար պետք է համեմատվել փորձնական 3 դասերի արդյունքներ. առաջին դասաժամին աշակերտների տված գրավոր պատասխանները: Պատասխանների գնահատման 3 մակարդակ է դիտարկվելու՝ լիարժեք, թերի, պատասխանի բացակայություն: Ապա համապատասխան դիագրամների միջոցով ներկայացվել է աշակերտներից յուրաքանչյուրի մոտ առկա փոփոխությունը, ընդ որում հնարավոր է, որ որոշ աշակերտների մոտ որևէ փոփոխություն չարձանագրվի, որոշ դեպքերում միջնամասում ավելի լավ արդյունք է արձանագրվել, քան ավարտին: Դա բացատրվում է տարբեր գործոններով՝ թեմայով, բացակայություններով, տրամադրվածությամբ և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացնելիս կարևորել ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին, իր վրա զգա պատմության հետ երկխոսության արդյունքը: Քննադատական մտածողության հմտությունների զարգացման համար կիրառվել են բաց հարցեր: Գնահատելիս հաշվի էր առնվել օգտագործված պատմական փաստերի քանակը, օգտագործված աղբյուրների քանակն ու որակը, արված եզրակացությունների քանակն ու բովանդակությունը, սովորողի մտածողության ինքնուրույնությունը, ամբողջականությունը: Փորձարկումները թույլ տվեցին եզրակացնել, որ բաց հարցերը

- ընդլայնում են աշակերտների գիտելիքները պատմության այս կամ այն դասընթացի վերաբերյալ և ապահովում են ուսումնառության ինքնուրույնությունը:
- Մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ:
- սովորողը ոչ միայն հենվում է իր նախկին ունեցած գիտելիքի վրա, այլ փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել՝ նաև հենվելով ենթագիտակցության վրա:
- դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման:
- ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ:

Մեծ հարցերը իրենց մեջ ներառում են բազմաշերտ բովանդակություն և տրամաբանություն, ուստի այն դասի սկզբում ուղղելը գործնականում նպատակահարմար չէ: Առավել արդյունավետ կլինի, եթե թեմայի ուսումնասիրությունը դասի ընթացքում սկսվի ավելի տեղեկատվական հարցերից, որոնք հետագա ընթացքում հիմք են հանդիսանում բաց, բազմաթիվ մեկնաբանությունների առիթ սովող հարցերի համար: Վերլուծություն կատարելու համար նախնառաջ պետք է հստակ տիրապետել փաստական նյութին, իմանալ դեպքերի ճիշտ ժամանակագրությունը: Մեկնաբանություններին պետք է անդրադառնալ աստիճանաբար դասի ընթացքում:

Առավել բարձր արդյունավետություն են ապահովում ծավալված բաց քննարկումները: Թեև գրավոր տրված պատասխանները թույլ են տալիս դիտարկել յուրաքանչյուրի պատասխանը, սակայն բանավոր պատասխանները ապահովում են շարունակական քննարկումներ, թույլ են տալիս աշակերտներին լսել իրենց դասընկերների տեսակետները, պաշտպանել իրենց մոտեցումը կամ համաձայնել: Դրանք թույլ են տալիս ուսուցչին անմիջական ՀԿ ապահովել: Վերլուծելու կարողության զարգացումը իր հերթին նպաստում է աշակերտի՝ պրոբլեմները բացահայտելու, դրանք պարզ ու հսակ ձևավորելու կարողության զարգացմանը:

Եթե փորձարկումների սկզբնական շրջանում աշակերտները վերլուծում էին նյութը հարցերի պատասխանելու միջոցով, ապա ժամանակի ընթացքում, առանց սպասելու ուսուցչի հարցադրմանը, բենք ինքնաբերաբար սկսեցին գնահատականներ տալ: Սա վկայում է, որ պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված դատողություններ, առանձնացնել պատճառները, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չչտապել դատողություններ անելիս:

Մեր հետագա խնդիրն է մշտապես ուշադրության կենտրոնում պահել աշակերտների քննադատական, ստեղծագործական մտածողության հմտությունների զարգացումը: Գտնել, բացահայտել ու կիրառել տարբեր միջոցներ հասարկության լիարժեք անդամներ ձևավորելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аверьянов Л. Я. Социология: искусство задавать вопросы. Издание 2-е, переработанное и дополненное. Москва. Изд.-во “Москва” 998. 195 с.
2. Лернер И. Я. Развитие мышления учащихся в процессе обучения истории. М.: Изд.-во “Просвещение”. 1982. 191 с.
3. Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002. 224 с.
4. Халперн Д.Ф. Психология критического мышления. Санкт-Петербург. Изд.-во “Питер”. 2000. 496 с.
5. Block R. A. Education and thinking skills reconsidered. // American Psychologist. 1985. 40. P. 574-575.
6. [https://www.researchgate.net/publication/271429469 Camels diamonds and conterf actuals a model for teaching causal reasoning](https://www.researchgate.net/publication/271429469_Camels_diamonds_and_conterf_actualse_a_model_for_teaching_causal_reasoning)
7. <http://www.nwlink.com/~donclark/hrd/bloom.html>
8. https://books.google.am/books/about/Classroom_questions.html?id=-uk8AAAAYAAJ&redir_esc=y
9. <http://historicalthinking.ca/historical-thinking-concepts>